մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ հայցը մերժվում է, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով Հայցվորի ներկայացուցչի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու պահանջին՝ Դատարանն, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունց, արձանագրում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, ուստի սույն պարագայում հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, Դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու հարցն ևս պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Նավիտաս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, երրորդ անձինք՝ «Հակ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի, «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 15.07.2025 թվականի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշումը՝ «Հակ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի, «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի մասով անվավեր ճանաչելու, որպես հետևանք նույն արձանագրության 2.1 կետի 8-րդ ենթակետով և 2.2 կետով կայացրած որոշումներն անվավեր ճանաչելու, ինչպես նաև «Նավիտաս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am